



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 602-Ա/2

13 մայիսի, 2020 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՅՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ -
2020» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ
ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2020» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը համաձայն հավելված N° 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N° 2-ի:
3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը պատվիրակել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2020» մրցույթը:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (<https://grants.scs.am>), մինչև 2020 թվականի հուլիսի 17-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը գետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00, հեռախոսներ՝ 010-210140 (*113) / 043-496364, 010-210140 (*116) / 077-465831 կամ, տեխնիկական հարցերով, 010-210140 (*108) / 094-542472:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

ՀՐԱՎԵՐ

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՅՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2020» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2020» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 13-ի N 602-Ա/2 հրամանի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ասպիրանտներին անհատական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար դրամաշնորհներ կտրամադրի մրցութային կարգով ընտրված Թեմաներին:

Մրցույթի նկարագրությունը

3. Մրցույթի մասնակից (այսուհետ՝ Հայտատու) կարող է լինել մինչև 35 տարեկան (ուժ 35 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը)՝

- պետական պատվերով առկա ուսուցման ասպիրանտը,
- պետական պատվերով հեռակա ուսուցման երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի ասպիրանտը,
- երկրորդ, երրորդ, չորրորդ տարվա հայցորդը, ով գիտական կազմակերպությունում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ Կազմակերպություն) ձևակերպված է որպես հայցորդ Հայտ ներկայացնելուց առնվազն մեկ տարի առաջ:

4. Հայտատուն Մրցույթին մասնակցում է իր գիտական ղեկավարի հետ համատեղ:

5. Թեմայի 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը 3 200.0 հազար (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ է:

6. Մրցույթն անցկացվում է երեք ենթաձրագրերով.

- առաջին՝ Թեմայի տևողությունը 36 ամիս (երեք հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),

- երկրորդ՝ Թեմայի տևողությունը 24 ամիս (երկու հաջորդական փուլեր, յուրաքանչյուրը՝ 12 ամիս),

- երրորդ՝ Թեմայի տևողությունը 12 ամիս:

7. Յուրաքանչյուր ենթաձրագրի համար սույն հրավերի 11-13-րդ կետերով սահմանված են նվազագույն պայմանները:

8. Հայտատու կարող է լինել յուրաքանչյուր գիտական ղեկավարի միայն մեկ ասպիրանտ կամ հայցորդ:

Մրցույթին մասնակցելու պայմանները

9. Մրցույթին մասնակցող ասպիրանտը կարող է դիմել գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով, իսկ հայցորդը՝ «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ» և «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

10. Հայտատուն և նրա գիտական ղեկավարը պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ և Թեմայի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

11. Առաջին ենթաձրագրին կարող են դիմել.

- առկա ուսուցմամբ առաջին կուրսի ասպիրանտները,
- հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսի ասպիրանտները,
- երկրորդ տարվա հայցորդները,

որոնք պետք է ունենան անգլերենի կամ ֆրանսերենի կամ գերմաներենի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիր.

✓ անգլերենի համար՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ ոչ պակաս, քան՝ 46, «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ ոչ պակաս, քան՝ 5.5 միավոր,

✓ ֆրանսերենի համար՝ «TCF» (ԹիՍիԷֆ)՝ ոչ պակաս, քան՝ 200 միավոր,

✓ գերմաներենի համար՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ ոչ պակաս, քան՝ 60 միավոր:

12. Երկրորդ ենթաժրագրին կարող են դիմել.

- առկա ուսուցմամբ երկրորդ կուրսի ասպիրանտները,
- հեռակա ուսուցմամբ երրորդ կուրսի ասպիրանտները,
- երրորդ տարվա հայցորդները,

որոնք պետք է ունենան.

✓ անգլերենի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS»(9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր,

✓ առնվազն մեկ գիտական հոդված՝ ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների) ամսագրում կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրերում:

13. Երրորդ ենթաժրագրին կարող են դիմել.

- առկա ուսուցմամբ երրորդ կուրսի ասպիրանտները,
- հեռակա ուսուցմամբ չորրորդ կուրսի ասպիրանտները,
- չորրորդ տարվա հայցորդները,

որոնք պետք է ունենան.

✓ անգլերենի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիր՝ «TOEFL» iBT(120)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 79 միավոր կամ «IELTS»(9)-ի դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 6.5 միավոր,

✓ երկու գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրում կամ մեկ գիտական հոդված ԱԳ ունեցող և երկու գիտական հոդված՝ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրերում:

14. Հայտատուի գիտական ղեկավարը վերջին 5 տարում պետք է ունենա առնվազն մեկ գիտական հոդված՝ ԱԳ ունեցող գիտական ամսագրում:

15. Բեալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություններ կայացնելու դեպքում Հայտը չի քննարկվում:

Հայտ լրացնելը և ներկայացնելը

16. Հայտը (Հավելված N 2.2) լրացնում և ներկայացնում է Հայտատուն՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (*այսուհետ՝ Համակարգ*) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2020 թվականի **հուլիսի 17-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

17. Ծախսերի նախահաշվի (այսուհետ՝ Նախահաշիվ) «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության չափն ընդունել մինչև 150.0 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը: Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

18. Նախահաշվի «Գիտական ղեկավարի վարձատրություն» հոդվածը կազմելիս Հայտատուի գիտական ղեկավարի համար նախատեսել մինչև 600.0 հազար ՀՀ դրամի չափով վարձատրություն (12 ամսվա կտրվածքով)՝ ներառյալ եկամտային հարկը: Գիտական ղեկավարի վարձատրության գումարը վերոնշյալից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

19. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր:

20. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը Հայտատուն կարող է օգտագործել օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

21. Նախահաշվի բոլոր կետերը պետք է մեկնաբանել և հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

22. Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- Հայտատուի դիմումը (Հավելված N 2.3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը,

Նախահաշիվը,

- տեղեկանք Կազմակերպության ասպիրանտ հանդիսանալու մասին, որտեղ նշված է ուսուցման ձևը (առկա կամ հեռակա), ուսուցման տարին,
- տեղեկանք Կազմակերպությունում հայցորդ ձևակերպված լինելու մասին, որտեղ նշված է ձևակերպման տարեթիվը,
- Հայտատուի անձնագրի և սոցիալական քարտի/հանրային ծառայությունների համարանիշի կամ նույնականացման քարտի պատճենը,
- օտար լեզվի իմացությունը հաստատող պաշտոնական հավաստագիրը:

23. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22): Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2020 թվականի **հուլիսի 24-ն** է:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը՝ փորձաքննության ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

Հայտերի գիտական փորձաքննությունը

24. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են վերջիններիս գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ)՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

25. Կոմիտեն Խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Հայտի գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

26. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են՝

- Հայտատուի գիտական ղեկավարի վերջին հինգ տարվա հրապարակումները (առավելագույնը 10), ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 2.4),

- Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները,

- աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և Նախահաշվի հիմնավորվածությունը,

- գիտության տվյալ բնագավառի (մասնագիտության) առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

27. Մասնագիտական կարծիք ստանալու համար Խորհուրդը կարող է ներգրավել տվյալ մասնագիտության անկախ փորձագետի:

28. Խորհուրդը Հայտատուին կարող է հրավիրել հարցազրույցի:

29. Յուրաքանչյուր Հայտի համար Խորհուրդը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ:

30. Կոմիտեի և Խորհրդի կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

31. Գիտական փորձաքննության ավարտից հետո, Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով, մրցույթի յուրաքանչյուր ենթաժրագրի համար, ըստ գիտության բնագավառների (մասնագիտությունների) Կոմիտեն ձևավորում է վարկանիշային ցանկեր ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

32. Խորհուրդը, ձևավորված վարկանիշային ցանկերի հիման վրա, Հայտերի ֆինանսավորման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացությունները ներկայացնում է Կոմիտեի նախագահին՝ Հայտերի վերջնական ընտրության համար:

33. Կոմիտեի նախագահը, ելնելով Խորհրդի եզրակացությունից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան ծախսային ուղղությամբ նախատեսված ֆինանսական հատկացումների չափից, հաստատում է ֆինանսավորման երաշխավորվող Թեմաների ցանկը, Հայտատուների և նրանց գիտական ղեկավարների ցուցակը, յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

34. Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

Այլ դրույթներ

35. Կոմիտեն Կազմակերպությանը տրամադրում է տվյալ Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, Հայտատուների և նրանց գիտական ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

36. Կոմիտեի և Հայտատուի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

37. Հայտատուի գիտական ղեկավարի և Կազմակերպության միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր (Նախահաշվի «Գիտական ղեկավարի վարձատրություն» հոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

38. Թեմայի իրականացման ընթացքում, առաջին և երկրորդ ենթաձրագրերի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո (12 ամիսը լրանալուց հետո) Հայտատուն Կոմիտե է ներկայացնում ընթացիկ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

39. Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ հաշվետվությունն ընդունելու մասին:

40. Առաջին և երկրորդ ենթաձրագրերի յուրաքանչյուր փուլի հետագա 12-ամսյա ֆինանսավորման համար պարտադիր է սույն հրավերի՝ համապատասխանաբար **12** և **13**-րդ կետերով պահանջվող, նվազագույն պայմանները բավարարող փաստաթղթերի առկայությունը:

41. Սույն հրավերի **12** կամ **13**-րդ կետերով պահանջվող գիտական հոդվածները պետք է առնչվեն Թեմային: Գիտական հոդված չեն համարվում գիտաժողովների նյութերի ժողովածուներում տպագրված նյութերը: Բեալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում Հայտի ֆինանսավորումը դադարեցվում է:

42. Առաջին և երկրորդ ենթաձրագրերի յուրաքանչյուր փուլի հետագա 12-ամսյա ֆինանսավորումը դադարեցվում է անհրաժեշտ պայմաններին չբավարարելու, ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրված բացասական եզրակացության հիման վրա:

43. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և հաշվետվությունները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1. Մաթեմատիկա
- 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4. Քիմիա
- 1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6. Կենսաբանական գիտություններ
- 1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- 2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.3. Մեխանիկա
- 2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6. Նյութագիտություն
- 2.7. Բժշկական սարքաշինություն
- 2.8. Էկոլոգիա
- 2.9. Կենսատեխնոլոգիա
- 2.10. Նանոտեխնոլոգիա
- 2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Ընդհանուր բժշկություն
- 3.2. Կլինիկական բժշկություն
- 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
- 3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
- 4.2. Բուսաբուծություն
- 4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
- 4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
- 4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. Հոգեբանություն
- 5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
- 5.3. Մանկավարժական գիտություններ
- 5.4. Սոցիոլոգիա
- 5.5. Իրավունք
- 5.6. Քաղաքական գիտություններ
- 5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
- 5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
- 5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6.1. Պատմություն, հնագիտություն
- 6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
- 6.3. Փիլիսոփայություն, էթիկա
- 6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
- 6.5. Արվեստագիտություն
- 6.6. Այլ հումանիտար գիտություններ

Ուշադրություն: Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն միայն ծանոթացնելու
առցանց լրացվող ձևերի հետ և դյուրացնելու առցանց լրացնելու գործընթացը:

ՀԱՅՏ

**«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2020» ՄՐՑՈՒՅԹԻ**

Հայտը հանձնված է «___» _____ 2020թ. Ծածկագիր՝ _____
(ձևավորվում է Համակարգի կողմից)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը, բնույթը
2. Հուշող (բանալի) բառեր
3. Հայտատուի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, ասպիրանտուրա ընդունվելու/հայցորդ ձևակերպվելու տարեթիվը, մասնագիտությունը
4. Թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպարավական ձևը և գերատեսչական պատկանելությունը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն
5. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (12, 24 կամ 36 ամիս)
6. Պահանջվող ֆինանսավորման ծավալը
այդ թվում՝
 - աշխատանքի վարձատրություն (ներառյալ եկամտային հարկը)
 - գիտական ղեկավարի հավելավճար
 - այլ ծախսեր
7. Հայտատուի ստորագրությունը
8. Հայտատուի գիտական ղեկավարի ստորագրությունը
9. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 11 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. համառոտ բնութագիրը (անուրացիա, մինչև 0.5 էջ)

2. խնդրի դրվածքը, արդի վիճակը (մինչև 1 էջ)

3. գիտական նպատակները և խնդիրները (մինչև 0.5 էջ)

4. հետազոտական ծրագիրը (մինչև 4 էջ)

5. իրականացման եղանակները (մինչև 1 էջ)

6. առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 0.5 էջ)

7. օրացուցային պլան (ըստ եռամսյակների, մինչև 1 էջ)

8. միջազգային համագործակցության նախադրյալները և նպատակահարմարությունը (մինչև 0.5 էջ)

9. Կոմիտեի անդամները ունեցած ձեռքբերումները (մինչև 0.5 էջ)

10. ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները (մինչև 0.5 էջ)

(գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

11. օգտագործված գրականության ցանկը (մինչև 1 էջ)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(ձևավորվում է Համակարգի կողմից)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)			
ազգանուն, անուն, հայրանուն	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)			
ազգանուն, անուն, հայրանուն	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			պահանջվող գումար
1)			
2)			
...			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ			պահանջվող գումար
1)			
2)			
...			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

Հայտատու՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* Մեկնաբանել և հիմնավորել ծախսերի նախահաշվի բոլոր կետերը

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)

_____ իր
(ազգանուն)

_____ (հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների
հետազոտությունների աջակցության ծրագիր - 2020» մրցույթի մասնակցության
«_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

« ____ » _____ 2020 թ.

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ
ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ Ե) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus և միջազգային գիտատեղակատվական այլ շտեմարանների (այսուհետ՝ ՄԳՇ), ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI/CR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

0.2-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝

0.20՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ («Science Citation Index Expanded(SCIE)», «Social Sciences Citation Index(SSCI)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, ՄԳՇ («SCIE», «SSCI», «(ESCI)» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,

0.05՝ ԱԳ չունեցող, ՄԳՇ («SCIE», «SSCI», «(ESCI)» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրի դեպքում:

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների՝ Մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող), հեղինակ(ներ)ի գիտական աշխատությունների վրա հղումներ պարունակող, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ² ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական

¹Հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:
²Մեկ տպագրական մամուլը համաարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի:

նկարագրություն պարունակող հրապարակումները: Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվում:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության կամ նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար՝

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B=0,15՝ արտերկրում օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B=0,10՝ ՀՀ-ում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն (օտար լեզվով կամ հայերեն),

B=0,075՝ արտերկրում օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

B=0,05՝ ՀՀ-ում հրատարակված գիտական աշխատություն կամ նյութերի ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),

B=0,02՝ մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում,

CA=0,15՝ հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,

CA=0,075՝ հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),

P_{SH}՝ ծավալ (տպագրական մամուլ):